# ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՄԵՆԱՏԱՐԵՑ ՓԱՍՏԱԲԱՆԸ 90 ՏԱՐԵԿԱՆ Է

20.12.2013 12:13



Դեկտեմբերի 19-ին լրանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ Նարիման Միրզաբեկյանի 90-ամյակը:
Փաստաբանների պալատում կազմակերպվել է մեծարման ցերեկույթ: Նախագահ Արա Զոհրաբյանը շնորհավորել է Նարիման Միրզաբեկյանին և շնորհակալություն հայտնել բեղուն գործունեություն ծավալելու համար:

Արա Զոհրաբյանը հոբելյարին հանձնել է Պալատի անվանական ժամացույց և պատվոգիր ծննդյան 90-ամյակի և Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական ինստիտուտում ներդրած ավանդի համար:
Նարիման Միրզաբեկյանը շնորհակալություն է հայտնել Փաստաբանների պալատի նախագահին ուշադրության համար և մաղթել հետագա հաջողություններ:

*Նարիման Թևոսի Միրզաբեկյանը ծնվել է 1923 դեկտեմբերի 19-ին ԼՂԻՄ Մարտունու շրջանի Սարգիսաշեն գյուղում*
*1936թ. ավարտել է գյուղի թիվ 7 ծխական դպրոցը*
*1938թ. Բաքվի 9-րդ դպրոցում ստացել է միջնակարգ կրթություն*
*1941թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին սովորել է Մախաչկալայի ծովային-զինվորական ուսումնարանում*
*1949թ. ավարտել է Ադրբեջանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետ*
*1949-1978թթ աշխատել է ԽՍՀՄ դատախազությունում*
*1949-1950թթ աշխատել է որպես դատախազի օգնական*
*1952թ. ԽՍՀՄ Գլխավոր դատախազի հրամանով նշանակվել է դատախազ Պրելսկի մարզում*
*1963-1977թթ. Աշխատել է Ադրբեջանի Խանլարի շրջանի դատախազ*
*1977-1978թթ աշխատել է դատախազ Բաքվում*
*1979թ. անցել է թոշակի*
*1980թ. աշխատել է որպես փաստաբան*

*1941-1944թթ ծառայել է ԽՍՀՄ Կարմիր բանակում*

*Ամուսնացած է ունի երեք զավակ*

Նախորդ նորությունը: ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱՅԿ ԱԼՈՒՄՅԱՆԻ «ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ

Հաջորդ նորությունը: ԴԱԴԱՐԵՑՎԵԼ Է ԵՐԿՈՒ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

## Առաջարկվող նորություններ



**20.09.2013** ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ՀՀ ՓՊ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻՆ

**25.10.2013** ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻԼԴԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ



**11.11.2013** ԱՄՓՈՓՎԵԼ Է ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ



**15.11.2013** ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԹՈՒՐ ՇԱՎԱՐՇԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })